



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

**Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1**

«            »

**2018 թ.**

**N**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-266-13.02.2018-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող) նշանակելու մասին» N 236 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-266-13.02.2018-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսված լրացման կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 46-րդ կետով սահմանված է. «46) բժշկական հաստատության դեղատուն՝ բժշկական հաստատության կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է դեղատնային գործունեություն բժշկական հաստատության կարիքների համար, բացառությամբ դեղերի իրացման: Բժշկական հաստատության դեղատան շրջանակներում իրականացվող գործունեությունը ենթակա է լիցենզավորման բժշկական օգնության և սպասարկման գործունեության համապատասխան տեսակի շրջանակներում»: Հետևաբար, բժշկական հաստատության դեղատունը չունի առանձին իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ, այլ հանդիսանում է բժշկական հաստատության կառուցվածքային ստորաբաժանում և դեղատնային գործունեությունն իրականացնում է բժշկական հաստատության կարիքների համար: Մինչդեռ, նախագծով նախատեսված լրացմամբ առաջարկվում է առանց օրենքով նախատեսված մեծածախ իրացման լիցենզիայի առկայության, Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու իրավունք վերապահել նաև բժշկական օգնության և սպասարկման գործունեության լիցենզիա ունեցող անձին, ընդ որում առանց հստակեցնելու ներմուծման նպատակը (բժշկական հաստատության կարիքների համար կամ դեղերի մեծածախ կամ մանրածախ իրացման համար կամ այլ նպատակով), ինչն ընդունելի չէ:

2. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված լրացման մեջ առաջարկվում ենք՝

1) «և» շաղկապներն փոխարինել «կամ» շաղկապներով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասով ամրագրված դրույթների պայմաններում նախագծով առաջարկվող կարգավորումը կիրառելի կլինի թվարկված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, ինչը, գտնում ենք, չի բխում նախագծի նպատակներից.

2) «որդեգրող ծնող» և «որդեգրված երեխա» բառերը հանել, քանի որ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրումը դատական ակտ է, որով որդեգրվողը ձեռք է բերում կենսաբանական կապերին համարժեք ընտանեկան կապեր, որոնց շնորհիվ որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Հետևաբար, «ծնող» և «որդեգրող ծնող», ինչպես նաև «երեխա» և «որդեգրված երեխա» հասկացությունների տարանջատումը չի բխում օրենքի պահանջից.

3) անդրադառնալ խորթ ծնողներին, քանի որ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 85-րդ հոդվածը սահմանում է խորթ հորը և խորթ մորը պահելու խորթ զավակների պարտականությունը, ըստ որի, օգնության կարիք ունեցող անաշխատունակ խորթ ծնողներն իրավունք ունեն դատական կարգով պահանջել դրա համար անհրաժեշտ բավարար միջոցներ ունեցող չափահաս աշխատունակ խորթ զավակներից ապրուստի միջոց, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսիններից (նախկին ամուսիններից): Այլապես ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը, անգամ ցանկության բացակայության դեպքում, սահմանում է դատական միջամտությամբ խորթ ծնողներին պահելու խորթ երեխաների պարտականությունը, մինչդեռ նախագծային կարգավորումների պայմաններում խորթ երեխան ցանկության դեպքում անգամ չի

կարողանա անհրաժեշտ դեղորայք ներմուծել խորթ ծնողի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման համար:

Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ առկա տեղեկատվությունը հնարավորություն չի տալիս գնահատելու նախագծով առաջարկվող ընտանիքի անդամներ համարվող սուբյեկտների հենց նախագծով ընտրված շրջանակի հիմնավորվածությունը և նպատակահարմարությունը:

Ելնելով 'նշվածից' առաջարկում ենք վերանայել նախագծի իմաստով ընտանիքի անդամների շրջանակը:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2018 թվականի N 236 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ  
Մ Ա Ս Ի Ն

---

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-266-13.02.2018-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2018 թ. մարտի 7  
Երևան



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետը լրացնել նոր «գ» ենթակետով.

«գ. բժշկական օգնության եւ սպասարկման գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունները՝ «բժշկական հաստատության դեղատուն» դեղատնային գործունեություն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:»,

2) 7-րդ մասի 1-ին կետում «Ֆիզիկական անձի» բառերից հետո լրացնել «եւ նրա ընտանիքի անդամների (ամուսին, ծնող, որդեգրող ծնող, խնամատար ծնող, երեխա, որդեգրված երեխա, խորթ երեխա, հոգեզավակ, քույր, եղբայր, տատ, պապ եւ թոռ)» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«Դեղերի մասին» ՀՀ օրենքի նախագծի անհրաժեշտության**

Նախագծի նպատակն է համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններին, բժշկական հաստատության դեղատան առկայության դեպքում, հնարավորություն տալ դեղագործական արտադրանք ներմուծելու՝ լիարժեք բուժսպասարկում իրականացնելու համար: Բացի դրանից, նախագծով կարգավորվում է օտարերկյա պետություն մեկնողների եւ ժամանողների ընտանիքի անդամներից (ամուսին, ծնող, որդեգրող ծնող, խնամատար ծնող, երեխա, որդեգրված երեխա, խորթ երեխա, հոգեզավակ, քույր, եղբայր, տատ, պապ եւ թոռ)՝ դեղերի ներմուծման եւ արտահանման հավաստագիր ունենալու պահանջը հանել: